

իշխանութիւնը միջամտէ . անոնք չթողուցին նաեւ որ եկեղեցական իշխանութիւնը դատն ի նպաստ Հայոց վճռէ :

Ստիպուեցան Հայք խնդիրը Հռոմի առջեւ հանել . Սիմէոն քահանայ, որ պիտի ուղեւորէր Հռոմ, յանձնելու Քահանայապետին Մովսէս կաթողիկոսին թուղթը, ընկերակցութեամբ ուրիշ պատգամաւորներու մեկնեցաւ դէպի Հռոմ : Ունէին իրենց հետ նաեւ թագաւորի եւ քաղաքին արքեպիսկոպոսի կողմէն «*Թուղթս բարեխօսութեան*» (Դաւր. 382) : Անոնք հասան Հռոմ եւ մատուցին սրբազան Քահանայապետին «*նախ ղխնդրանաց թուղթն Մովսէս կաթողիկոսին եւ ապա զԹագաւորին եւ զԱրքեպիսկոպոսին*» (Դաւր. 382) :

Մովսէս կաթողիկոսի առ Քահանայապետն Ուրբանոս Ը. ուղղած թղթին համառօտութիւնն է հետեւեալը .

Քաղուածք էջմիածնի Մովսէս Կաթողիկոսի 19 Օգոստ. 1633³⁰ առ Ուրբանոս Ը. Քահանայապետ գրած նամակէն :

Archivio Prop. XI. Letteri di lingua straniera
an. 1631—1645, fol. 155:

Կը խնդրէ Քահանայապետին պաշտպանութիւնը ի նպաստ Լեհաստանի Հայերուն : Ուղարկած է իւր մէկ նուիրակը՝ Տէր Խաչատուր (Լեհաստանի) Լվով (քաղաքը) եւ Կա-

³⁰ Մովսէս կաթողիկոսի թուղթին գրութեան տարին է հաւանօրէն 1632. որ Հռոմ հասած 1633ին եւ Օգոստոս 19ի նիստին մէջ կարգացուած :